




**Տոռնադո
ԱՄՆ-ում**



**Աղետալի
անվտանգություն**



**Մայիս ամսվա կլիմա-
յական բնութագիրը**



**Մեքսիկական ծոց.
1 տարի անց**



արտակարգ թերթ

N 15 (384) 29.4.2011 - 5.5.2011 www.emergency.am

Երեւանը միացավ «Իմ քաղաքը պապրասպվում է» արշավին

Ապրիլի 22-ին Երեւանում՝ Արտակարգ իրավիճակների նախարարության եւ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի նախաձեռնությամբ, կայացավ միջազգային համաժողով, որի թեման էր «Աղետների ռիսկի նվազեցման համակարգի զարգացումը Հայաստանում»։ Միջոցառմանը ներկա էին տարբեր կառավարական մարմինների, նախարարությունների, մարզպետարանների ու քաղաքային համայնքների ղեկավար կազմի, ինչպես նաեւ դեսպանատների, միջազգային ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ։

Միջազգային համաժողովում նպատակն էր ներկայացնել Հայաստանում Հյուսիսային Գործողությունների ծրագրի իրականացումն ու ապակենտրոնացումը, Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլանի մասին (ԱՌՆԱՊ) ելույթներն ու աշխատանքը, ինչպես նաեւ ՄԱԿ-ի «Իմ քաղաքը պապրասպվում է» համաշխարհային արշավը։

Համաժողովում սկզբում մասնակիցները 1 րոպե լռությամբ հարգեցին մարտի 11-ին ճապոնիական տեղի ունեցած ցունամիի զոհերի հիշատակը։

Բացման խոսքում Ազգային անվտանգության քարտուղար Արթուր Բաղդասարյանը նշեց, որ աղետների ռիսկի նվազեցումը երկրի զարգացման կարեւորագույն ուղղություններից է։

- Չմոռանաք, որ Հայաստանն աղետներից տուժած երկիր է, եւ յուրաքանչյուր տարի մեր երկրին շարունակում են

սպառնալ տարբեր աղետներ։ Այս առումով չափազանց կարեւոր է, որ մեր երկրում մշակվի եւ ներդրվի աղետների ռիսկի նվազեցման միացյալ ռազմավարություն, որը կհամապատասխանի ժամանակակից միջազգային չափանիշներին։ ՀՀ ԱԻՆ եւ ՄԱԿ-ի համագործակցությունը կարող է հիմք դառնալ այս ոլորտում լուրջ ձեռքբերումներ արձանագրելու համար։ ԱՌՆԱՊ-ի հիմնադրումը եւ լավագույն միջազգային փորձի ուսումնասիրությունը հնարավորություն կտա ժամանակին կանխատեսել վտանգները, մշակել միջոցառումների հստակ ծրագիր, ունենալ պատասխանատուներ եւ ժամանակացույց, որպեսզի հետամուտ լինենք այդ ամենը կյանքի կոչելուն։

Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող Դաֆինա Գերչեանը նշեց աշխարհում տեղի ունեցող աղետների թվի մտահոգիչ աճը։

- Վիճակագրությունը ցույց է տալիս, որ միայն անցյալ տարվա ընթացքում աշխարհում տեղի է ունեցել 373 բնական աղետ, որոնց հետեւանքով մահացել է 296 800 մարդ։ Հայաստանը նույնպես ենթակա է բազմաթիվ աղետների։ Այդ պատճառով չափազանց կարեւոր է, որ կառավարությունը, հասարակական ու միջազգային կազմակերպությունները միավորեն իրենց ջանքերն աղետների ռիսկերը նվազեցնելու համար։

Երեւանի քաղաքապետ Կարեն Կարապետյանը նույնպես կարեւորեց աղետների ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ ջանքերի միավորումն ու գործի կա-

րելորդության գիտակցումը։

- Մի այսպիսի խոսք կա. ասում են՝ ինչո՞վ է խելոք մարդը տարբերվում հմուտ մարդուց։ Խելոք մարդը կարողանում է դուրս գալ արտակարգ իրավիճակից, իսկ հմուտը՝ չի հայտնվում մեծ իրավիճակներում։ Ժամանակն է, որպեսզի մենք էլ խելոքից անցնենք հմուտ մարդու կարգավիճակին։ Թե՛ երկրի, թե՛ քաղաքների, թե՛ այլ կառույցների կառավարիչները պետք է կարողանան կանխատեսումներ անել եւ պատրաստ լինել ամենատարբեր իրավիճակների։

ԱԻ նախարար Արմեն Երիցյանի խոսքով՝ ազգային պլանի մասին, որը Հյուսիսային Գործողությունների ծրագրի առաջին պահանջներից մեկն է, նախարարության 2010 թ. կարեւոր ձեռքբերումներից է։

- Աղետներն այսօր լուրջ մարտահրավեր են ամբողջ աշխարհի համար։ Արտակարգ իրավիճակների նախարարությունը նույնպես քայլեր է ձեռնարկում դրանց դիմակայելու ուղղությամբ, եւ մենք միասին փորձում ենք կառուցել աղետակայուն երկիր։ Բոլորն էլ հասկանում են, որ բնության հզոր տարերքին ոչ մի պետություն չի կարող միայնակ դիմակայել։ Այդ պատճառով եւս կարեւոր են համարում ԱՌՆ պլանի ստեղծումը։ Վերջին տարիներին աշխարհում շատ խոշոր աղետներ են գրանցվել, սակայն են միշտ բերում են Հիլինում եւ Հայթիում տեղի ունեցած երկրաշարժերի օրինակը։ Այդ երկրներում գրանցվեցին ուժեղ, զրեթե նույն մագնիտուդով երկրաշարժեր։ Սակայն Հիլինում զոհվեց



300 մարդ, իսկ Հայթիում՝ մոտ 300 հազար։ Սա նշանակում է, որ Հիլին ավելի պատրաստված էր, աղետակայուն երկիր էր, եւ մենք էլ պետք է գնանք այդ ճանապարհով, - նշեց ԱԻ նախարար Արմեն Երիցյանը։

Համաժողովում ընթացքում ՀՀԾ ազգային համակարգող Նիկոլայ Գրիգորյանը ներկայացրեց ԱՌՆԱՊ-ի գործողությունների ծրագրի իրականացումը Հայաստանում։ Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլանի մասին ստեղծվել է անցյալ տարի՝ հիմնադրամի տեսքով եւ առաջինն է տարածաշրջանում։

ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ղեկավար Համլետ Մաթեոսյանն իր զեկույցում ներկայացրեց 2010-2011 թթ. ՄԱԿ-ի Աղետների ռիսկի նվազեցման միջազգային ռազմավարության նախաձեռնությամբ իրականացվող «Իմ քաղաքը պապրասպվում է» խո-

րագրով համաշխարհային արշավը։ Այս ծրագրին, որի նպատակը քաղաքային համայնքների աղետակայունության բարձրացումն է, արդեն միացել է 634 քաղաք։ Միջոցառման ընթացքում մեր մայրաքաղաքը նույնպես միացավ այդ արշավին, ինչը հավաստեց քաղաքապետ Կարեն Կարապետյանի ստորագրած վկայագիրը։

Համաժողովում ներկա միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները բարձր գնահատեցին ԱԻՆ-ի վերջին մեկ տարվա աշխատանքը եւ նշեցին, որ ամեն կերպ կաջակցեն իրենց հայ գործընկերներին աղետակայուն պետություն կառուցելու ճանապարհին։

«Իմ քաղաքը պապրասպվում է» խորագրով համաշխարհային արշավին միանալու կարգին կարող եք տեղեկանալ www.emergency.am կայքից։

Գոհար Բաղդասարյան

Չեռնոբիլի աղետից 25 տարի անց

Ապրիլի 25-ին Արտակարգ իրավիճակների նախարարությունում տեղի ունեցավ Չեռնոբիլի աղետի 25-րդ տարելիցին նվիրված պարզեւատրման արարողություն։ Հայաստանի «Չեռնոբիլ» ասոցիացիայի անդամները մեղաւորներ ու պատվոգրեր ստացան՝ փրկարարական աշխատանքներում ցուցաբերած խիզախության ու կյանքին սպառնացող վտանգի պայմաններում կատարած անձնագոհ աշխատանքի համար։

Հիշում են ականատեսները Վլադիմիր Սոկոլյան, Խորհրդային Հայաստանի քաղաքապետության շտաբի պետի տեղակալ

- 1986 թվի սեպտեմբերին եւ Խորհրդային Հայաստանի քաղ-

պաշտպանության շտաբի օպերատիվ խմբի կազմում մասկացել են Չեռնոբիլի աղետի հետեւանքները լիկվիդացնելու աշխատանքներին։ Աշխատում էինք հատուկ մշակման կետերում, որոնք ատոմակայանից մինչեւ

30 կմ հեռավորության զոնայում էին գտնվում, նույնիսկ դրանցից մեկը հենց 4-րդ ռեակտորի մոտ էր, այնպես որ շատ վտանգավոր էր։

Ինքը՝ Չեռնոբիլ քաղաքը շրջանային կենտրոնն էր, որը ատոմակայանի հետ ոչ մի կապ չուներ, այստեղից մարդկանց արագ տարահանել էին։ Իսկ Պրիպյատ քաղաքում ապրում էր ատոմակայանի աշխատակազմը՝ իրենց ընտանիքներով։ 60 հազար բնակչություն կար այնտեղ։ Նրանք նույնպես էվակուացվել էին, բայց 3 օր ուշացումով ու տարիանման կանոնների խախտումներով։

>>> 4





Մեքենան շրջվել է

Ապրիլի 21-ին, ժամը 22.41-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Մաշտոցի պողոտայի թիվ 53 հասցեում գտնվող Մատենադարանի կենտրոնական մուտք բարձրացող ավտոճանապարհին շրջվել է ավտոմեքենա եւ տուժածներին դուրս բերելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Դեպքի վայր եւ մեկնել փրկարարական ուժերի վարչության հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ խումբը, ճակատաբերաբար հիմնադրվել խումբը (պարամեդիկներով):

Դեռեւս չպարզված հանգամանքներում «Կիլիկիա» տաքսի ծառայությանը պատկանող «Սամանդ» մակնիշի S 7836 պետհամարանիշի ավտոմեքենան դուրս է եկել երթելու մասից, բախվել բետոնե հենապատին եւ թեքվել կողքի: Փրկարարները ավտոմեքենայից դուրս են բերել վարորդ, 1975 թ.-ին ծնված Արթուր Գրիգորյանին եւ ուղեւորներ՝ 1959 թ.-ին ծնված Արուսյակ Զարուբյունյանին եւ 1962 թ.-ին ծնված Վարդուհի Գրիգորյանին, որոնք տեղում ստացել են առաջին բուժօգնություն եւ հրաժարվել հիվանդանոց տեղափոխվելուց:

Փրկարարների ուժերով ավտոմեքենան անվնաս դուրս է բերվել երթելու ելքի մաս:

Ջրածածկում

Ապրիլի 22-ին ժամը 10.25-ին տեղեկատվություն է ստացվել, որ Արփա եւ Եղեգիս գետերի վարարման հետեւանքով ջրածածկվել են Վայոց ձոր մարզի Վայք եւ Եղեգնաձոր քաղաքներին հարակից «Թեգխարաք» եւ «Քարին տակ» կոչվող հանդամասերը, Արենի գյուղի ջրհան կայանի եւ Եղեգնաձոր-

Մարտունի ավտոճանապարհի 1-ին կմ-ի հարակից տարածքները՝ ընդհանուր 6 հա մակերեսով:

Յրդեհ՝ վթարի հետեւանքով

Ապրիլի 23-ին, ժամը 21.57-ին, ահազանգ է ստացվել, որ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Ազատության փողոցի թիվ 12 շենքի հարակից տարածքում տեղի է ունեցել ավտովթար եւ հրդեհի բռնկում:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Դեռեւս չպարզված հանգամանքներում բախվել են խաչիկ Դադոյանին պատկանող «ՎԱՁ-2107» մակնիշի S 0975 պետհամարանիշի եւ Զորիկ Գրիգորյանին պատկանող «ՎԱՁ-2106» մակնիշի 31 LU 799 պետհամարանիշի ավտոմեքենաները, ինչի հետեւանքով տեղի է ունեցել հրդեհի բռնկում:

Վթարի հետեւանքով վարորդները ստացել են ոտքերի ջարդվածքներ: Տուժածները տեղափոխվել են Գավառի հիվանդանոց:

Յրդեհը մեկուսացվել է ժամը 22.13-ին, մարվել՝ 22.20-ին:

«ՎԱՁ-2107» մակնիշի ավտոմեքենան այրվել է ամբողջությամբ, իսկ «ՎԱՁ-2106» մակնիշի ավտոմեքենայում այրվել է առջեւի հատվածը եւ սրահը՝ մասամբ:

Խ. Դադոյանի առողջական վիճակը ծանր է, իսկ Զ. Գրիգորյանինը՝ բավարար:

Յայտնաբերվել է այրված ավտոմեքենա

Ապրիլի 24-ին, ժամը 01.23-ին, ահազանգ է ստացվել, որ Ստեփանավան-Վանաձոր ավտոճանապարհին՝ Պուշկինի լեռնանցքի հարակից տարածքում այրվում է ավտոմեքենա:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Կանչի վայրում այրվող ավտոմեքենա չի հայտնաբերվել:

Տեղեկատվություն է ստացվել, որ այրված ավտոմեքենան հայտնաբերվել է Ստեփանավան-Տաշիր ավտոճանապարհի 4-րդ կմ-ում: Տեղում պարզվել է, որ ճանապարհից դուրս՝ 6-7 մ հեռավորության վրա, հայտնաբերվել է ամբողջությամբ այրված «ՎԱՁ-2107» մակնիշի 8125 Ս պետհամարանիշի ավտոմեքենա, որում գտնվել է այրված դի: Յրդեհ-փրկարարների կողմից կատարվել են հովացման աշխատանքներ:

Դեպքով զբաղվում են ոստիկանության օպերատիվ խմբերը:

Բախվել է սյանը

Ապրիլի 25-ին, ժամը 07.25-ին, ահազանգ է ստացվել, որ Երեւանի Ծովակալ

Իսակովի պողոտայում տեղի է ունեցել ավտոպատահար եւ անհրաժեշտ է հրշեջ-փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ խումբը:

Դեռեւս չպարզված հանգամանքներում «ԲՄՎ» մակնիշի 03 SO 029 պետհամարանիշի ավտոմեքենան բախվել է ճամփեզրի սյանը:

Փրկարարների ուժերով վարորդը (մոտ 45 տարեկան, ինքնությունը չի պարզվել) դուրս է բերվել եւ շտապօգնության աշխատակիցների կողմից տեղափոխվել «Էրեբունի» բժշկական կենտրոն: Տուժածի առողջական վիճակը գնահատվել է ծանր:

Պայթյուն մեքենայում

Ապրիլի 25-ին, ժամը 22.09-ին, ահազանգ է ստացվել, որ Երեւան քաղաքի Քոչինյան փողոցի թիվ 1 շենքի հարակից տարածքում ավտոմեքենայի գազի բալոնը պայթել է եւ ավտոմեքենայից վարորդի դիմ դուրս բերելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր եւ մեկնել հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ խումբը, ճակատաբերաբար հիմնադրվել խումբը:

Դեռեւս չպարզված հանգամանքներում «ՎԱՁ-2106» մակնիշի 02 US 993 պետհամարանիշի ավտոմեքենայի գազի բալոնը պայթել է, ինչի հետեւանքով վարորդ, Երեւան քաղաքի Ջրվեժ բանավանի 5-րդ շենքի թիվ 38 բնակարանի բնակիչ, 1959 թ. ծնված Դովեփ Նազարյանը տեղում մահացել է:

Պայթյունի հետեւանքով վնասվել են մոտակայքում կայանած «Օպել Վեկտորա» մակնիշի 09SO811 պետհամարանիշի ավտոմեքենան եւ հարեւանությամբ գտնվող շինանյութի խանութի ապակիները:

Փրկարարների կողմից ավտոմեքենայից դուրս է բերվել Դ. Նազարյանի դիմ եւ հանձնվել ոստիկանության աշխատակիցներին:

Ջոհվել է թթվածնի բալոնի պայթյունից

Ապրիլի 27-ին ժամը 17.13-ին տեղեկատվություն է ստացվել, որ Սյունիքի մարզի Կապանի ասֆալտի գործարանի տարածքում գողման աշխատանքներ կատարելիս, թթվածնի բալոնի պայթյունի հետեւանքով զոհվել է զոդող՝ Կապանի բնակիչ 1943 թ. ծնված Ռուբիկ Սարգսյանը:

Պայթյուն Քաջարանում

Ապրիլի 26-ին, ժամը 14.52-ին ահազանգ է ստացվել, որ Սյունիքի մարզի Քաջարան քաղաքի «Ձանգեզուրի պղնձամոլիբդենա-

յին կոմբինատ» ՓԲԸ-ի մեխանիկական արտադրամասի հարակից տարածքում տեղի է ունեցել պայթյուն: Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Ըստ նախնական տվյալների՝ «Վահրամ եւ Նորայր» ՍՊԸ-ի կողմից կատարվող եռակցման աշխատանքների ժամանակ՝ դեռեւս չպարզված հանգամանքներում, տեղի է ունեցել թթվածնի բալոնի պայթյուն, ինչի հետեւանքով տեղում զոհվել է 1984 թ. ծնված Իսահակ Մայիլյանը, իսկ 1986 թ. ծնված Զորի Բաբայանը, 1988 թ. ծնված Էրիկ Գասպարյանը եւ 1950 թ. ծնված Տիգրան Շահբաջյանը ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ եւ տեղափոխվել Կապան քաղաքի հիվանդանոց:

Տ. Շահբաջյանի առողջական վիճակը գնահատվել է ծանր, իսկ Զ. Բաբայանի եւ Է. Գասպարյանի վիճակը՝ բավարար:

Կեղծ ահազանգ

Ապրիլի 25-ին, ժամը 15.52-ին ահազանգ է ստացվել, որ Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղի միջնակարգ դպրոցի հարակից տարածքում հայտնաբերվել է պայթուցիկ սարք:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

ՅՅ ՊՆ սակրավորների, ԱԱ եւ ոստիկանության աշխատակիցների հետ համատեղ իրականացված տեղազննման արդյունքում պայթուցիկ սարք չի հայտնաբերվել, եւ ահազանգը կեղծ էր:

Պապահար Յրազդանի կիրճում

Ապրիլի 27-ին ժամը 15.18-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանում՝ Դավիթաշենի կամրջի ստորին հատվածում (Յրազդանի կիրճի լանջին) մարմնական վնասվածքներով ընկած է տղամարդ, որին դուրս բերելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ խումբը:

Փրկարարների ուժերով կիրճից դուրս է բերվել Երեւան քաղաքի Ա. Խաչատրյան փողոցի 31-րդ շենքի թիվ 24 բնակարանի բնակիչ 1972 թ. ծնված Դմիտրի Յացինը, որը շտապօգնության ավտոմեքենայով տեղափոխվել է «Արմենիա» բժշկական կենտրոն:

Ըստ հերթապահ բժշկի՝ Դ. Յացինի առողջական վիճակը բավարար է:

Շաբաթվա ընթացքում հանրապետության տարածքում արձանագրվել է տարաբնույթ հրդեհների 34 դեպք: >>>



Խորտակվել է լաստանավ

Անցյալ շաբաթ Կոնգոյի արեւելյան մասում գտնվող Կիվու կղզում լաստանավ է խորտակվել: Տասնյակ մարդիկ համարվում են անհետ կորած: Ընդհանուր առմամբ նավի վրա եղել է մոտ հարյուր մարդ: Միջազգային կարմիր խաչի կոմիտեի տվյալներով՝ նավաբեկությունից հետո ողջ է մնացել ընդամենը 11 ուղեւոր: Մյուսների ճակատագիրն առայժմ անհայտ է:

Իրականացվում են որոնողափրկարարական աշխատանքներ: Վերջին տվյալներով՝ հայտնաբերվել է միայն 38 մարմին:

Կործանվել է օդանավ

ԱՄՆ-ի Նյու Մեքսիկո նահանգում, որը սահմանակից է Մեքսիկային, կործանվել է փոքր մի օդանավ, որը թնրավաճառներն օգտագործում էին կոկաինի տարանցման համար: Ավիավթարի մասին ոստիկանությանը հաղորդել են Դեթրոյթ լճի վրա աշխատող տեղացիները:

Երբ դեպքի վայր եւն ժամանել ոստիկաններն ու ջրասուզակները, օդանավն արդեն ամբողջությամբ սուզվել էր ջրի տակ, իսկ լճի մակերեսին սպիտակ փոշով բազմաթիվ փաթեթներ էին լողում: Պարզվել է, որ դա կոկաին է, եւ իրավապահները շրջափակել են լիճը:

Նախնական տվյալներով՝ ավիաաղետի հետեւանքով օդանավում գտնվողներից ոչ ոք չի փրկվել:

Առայժմ չի պարզվել, թե ում է պատկանում կործանված օդանավը:



Խոշոր հրդեհ Պեկինում

Ապրիլի 25-ին խոշոր հրդեհ է բռնկվել Չինաստանի մայրաքաղաք Պեկինում: Քաղաքի հարավային շրջանում այրվել է չորս-հարկանի բնակելի շենք:

Յրդեհի հետեւանքով զոհվել է 17 եւ վնասվածքներ ստացել 24 մարդ: Այրվող շենքից տարհանվել է ավելի քան 30 մարդ:

Յրդեհաշիջման աշխատանքներին ներգրավվել են 200 հրշեջ եւ զինվորականներ: Կրակը հաջողվել է մարել մեկ ժամվա ընթացքում:

Իրականացվում է հետաքննություն:

Երկաթուղային պապահար

Թայվանի հարավում զբոսաշրջիկներով գնացքը դուրս է եկել ռելսերից: Շրջվել է մի քանի վագոն, ինչի հետեւանքով զոհվել է 6 ուղեւոր, եւս 61-ը ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ: Բոլոր զոհվածները եւ տուժածները Չինաստանի քաղաքացիներ են:

Ութ վագոնից բաղկացած գնացքը տեղափոխում էր 130 զբոսաշրջիկ: Ըստ նախնական վարկածի՝ վթարի պատճառ եւն դարձել ծառից գնացքի վերջին վագոնի վրա ընկած խոշոր ծյուղերը:

Տոռնադո ԱՄՆ-ում

ԱՄՆ-ի Ալաբամա, Արկանզաս եւ Թենեսի նահանգներում ուժգին փոթորկի եւ տոռնադոների պատճառով հայտարարվել է արտակարգ դրություն: Ըստ ամերիկյան լրատվամիջոցների՝ հարավային նահանգներում



տարերքի զոհ է դարձել ավելի քան 30 մարդ: Ջոհերի մեծ մասը գրանցվել է Ալաբամայում: Օդերեւութաբանների հաղորդած տվյալներով՝ քամու ուժգնությունը տեղ-տեղ հասել է 160 կմ/ժ-ի: Փոթորիկը ուղեկցվել է տեղատարափ անձրեւներով, որոնք իրենց հերթին լուրջ հեղեղումների պատճառ եւն դարձել: Վատ եղանակի հետեւանքով առանց էլեկտրականության եւ մնացել հարյուր հազարավոր մարդիկ:

Ֆաինա Թյունիբաբյան



արագ արձագանքման ծառայություններ

>>> Հրդեհ Նախկին գիշերօթիկում

Ապրիլի 23-ին, ժամը 11.37-ին, ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւան քաղաքի 3. Ներսիսյան փողոցի թիվ 5 հասցեում՝ նախկին գիշերօթիկ դպրոցի տարածքում:

Դեպքի վայր են մեկնել վեց մարտական հաշվարկ, մեկ ավտոսանիտուր, 2 ջրատար, 644 օպերատիվ եւ պարանեղիկ-փրկա-

րարների խումբը, հրդեհաշիջման շտաբը:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 12.20-ին, մարվել՝ 12.49-ին:

Ամբողջությամբ այրվել է երկհարկանի շենքը՝ 900 քմ մակերեսով:

Հրդեհ «Պոլիմերփրուբ» գործարանում

Ապրիլի 28-ին ժամը 06.27-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ

է բռնկվել Արմավիրի մարզի Մերձավան գյուղում՝ «Պոլիմերփրուբ» գործարանի տարածքում:

Դեպքի վայր են մեկնել չորս մարտական հաշվարկ եւ հրդեհաշիջման շտաբը:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 07.17-ին, մարվել՝ 07.25-ին:

Գործարանի պոլիէթիլենային արտադրամասի տարածքում այրվել է հոսքագիծ՝ 500 քմ մակերեսով:

Հրդեհը երեխաների աչքերով

Ապրիլի 18-ին Գյումրու «Պիոներ պալատի» նկարչական խմբակում անցկացվեց «Հրդեհը երեխաների աչքերով» խորագրով միջոցառում՝ նվիրված «Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենքի ընդունման 10-ամյակին:

Միջոցառմանը մասնակցում էին «Պիոներ պալատի» ուսուցչական անձնակազմը, նկարչական խմբակի երեխաները եւ ծնողները, ինչպես նաեւ Շիրակի մարզային հրդեհային տեսչության աշխատակիցները:

Բացման խոսքով հանդես եկավ Շիրակի մարզային հրդեհային տեսչության 1-ին կարգի մասնագետ Ա. Փանոսյանը, որը նշեց, որ հրդեհները հիմնականում տեղի են ունենում մարդկային գործոնի պատճառով՝ հրդեհային անվտանգության տարրական կանոնների չհնարձարյան կամ չկատարելու հետևանքով:

Մեծ թիվ են կազմում երեխաների խաղերի հետևանքով առաջացած հրդեհները: Այդ պատճառով էլ պետք է մանկական ուսումնական հաստատություններում հաճախ անցկացվեն մանկաժողովներ, որոնք նվազագույն գիտելիքներ կփոխանցեն անվտանգության հիմնական դրույթների վերաբերյալ եւ անհրաժեշտության դեպքում կօգնեն ճիշտ կողմնորոշվելու հրդեհների եւ այլ աղետների ժամանակ:

Խմբակի ղեկավարը նշում է, որ երեխաները շատ շնորհալի են, բազմիցս մասնակցել են աղետ-

ների թեմաներով ցուցահանդեսների, այդ թվում նաեւ ճապոնիայում:

Լավագույններն էին 15-ամյա Լուսինե Ղարիբյանի «Էլ. ազդակից առաջացած հրդեհ», 12-ամյա Աննա Հարությունյանի «Էլ. ազդակից եւ մոմից առաջացած հրդեհ», 8-ամյա Շահեն Կորազյանի



Շահեն Կորազյան, 8 տարեկան

«Էլ. սարքավորումների շահագործման կանոնների խախտման հետևանքով առաջացած հրդեհ» նկարները: Լավագույն նկարների հեղինակները, ինչպես նաեւ խմբակի ղեկավար Ա. Միքայելյանը պարգևներ ստացան:



սեյսմիկ պաշտպանություն



Ս.թ. ապրիլի 21-ից 27-ը ՄՊԱԾ-ի դիտացմանը Հայաստանի Հանրապետության տարածքում 3 բալ ռիզմությամբ գրանցել է մեկ երկրաշարժ: Գավառ քաղաքից 18 կմ արեւմուտք գտնվող Էպիկենտրոնով ցնցումը տեղի է ունեցել ապրիլի 24-ին:

Տարածաշրջանում. 3 բալ եւ ավելի ռիզմությամբ տեղի է ունեցել չորս երկրաշարժ: 3 բալանոց ստորգետնյա ցնցում է գրանցվել ապրիլի 22-ին Աղբյուրի Նախիջևան քաղաքից 12 կմ հյուսիս: Հաջորդ օրը նույն ռիզմությամբ սեյսմիկ իրադարձություն է տեղի ունեցել Թուրքիայի Բուլանիկ քաղաքից 41 կմ հարավ: Ապրիլի 24-ին Իրանի Խոյ քաղաքից 46 կմ հյուսիս-արեւմուտք գտնվող Էպիկենտրոնով երկրաշարժի ռիզմությունն է 4 բալ, որին 1 ժամ անց հետեւել է 3 բալանոց թույլ ցնցում:

Տարածաշրջանից դուրս. 6.0 մագնիտուդով գրանցվել է հինգ ռիզմ երկրաշարժ, որից երեքը՝ ճապոնիայի արեւելյան հատվածում: Երկրաշարժերը, որոնք ունե-

ցել են 6.0 մագնիտուդ, ճապոնիայում մարտի 11-ին տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի հետցնցումներն են: Պաշտոնական տվյալներով մինչ օրս ճապոնիայի աղետալի երկրաշարժի հետևանքով զոհվել է 14.517 մարդ, վեց արեՖեկտուրաներում անհետ կորած են համարվում 11.432-ը, ամենաշատ մարդկային զոհերը եղել են Միյագի պրեՖեկտուրայից՝ 8.745 մարդ, ժամանակավոր կացարաններում են բնակվում մոտավորապես 130 հազար մարդ, ավերվել է ավելի քան 151 հազար շինություն: Հաջորդ սեյսմիկ իրադարձությունը 6.9 մագնիտուդով տեղի է ունեցել ապրիլի 23-ին Սան Կրիստոբալ կղզու (Սողոմոնյան կղզիներ) ավաւները հատվածում: Հաջորդ օրը ռիզմ երկրաշարժ է գրանցվել ինդոնեզական Սուլավեսի կղզու շրջակայքում, որն ունեցել է 6.2 մագնիտուդ: Երկրաշարժերի հետևանքով զոհեր, ավերածություններ չկան:

ԱԻՆ ՄՊԱԾ գործակալություն

եղանակի տեսություն

Առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում

Հանրապետության տարածքում ապրիլի 29-ի գիշերը սպասվում է առանց տեղումների եղանակ, 29-ից մինչեւ մայիսի 3-ը սպասվում է անձրեւ եւ ամպրոպ, առանձին վայրերում հնարավոր է կարկուտ: Քամին՝ հարավ-արեւմտյան 5-10 մ/վրկ, ամպրոպների ժամանակ քամու ռիզմացում 18-23 մ/վրկ: Օդի ջերմաստիճանը ապրիլի 29-ին կբարձրանա 2-4 աստիճանով, այնուհետեւ էական չի փոխվի:

Օդի ջերմաստիճանը ապրիլի 29-ի գիշերը կտատանվի լեռնային շրջաններում՝ +1... +6, Տավուշում՝ +7... +12, Լոռիում՝ +4... +9, Արագածոտնի նախալեռներում՝ +8... +11, Արարատյան դաշտում՝ +10... +13, Սյունիքի հովիտներում՝ +7... +12, Սյունիքի նախալեռներում՝ +4... +8, Արցա-

խում՝ +5... +8 աստիճանի սահմաններում:

Օդի ջերմաստիճանը ապրիլի 29-ի ցերեկը կտատանվի լեռնային շրջաններում՝ +12... +17, Տավուշում՝ +15... +20, Լոռիում՝ +13... +18, Արագածոտնի նախալեռներում՝ +20... +23, Արարատյան դաշտում՝ +21... +24, Սյունիքի հովիտներում՝ +20... +24, Սյունիքի նախալեռներում՝ +11... +16, Արցախում՝ +14... +19 աստիճանի սահմաններում:

Երեւանում ապրիլի 29-ի գիշերը սպասվում է առանց տեղումների եղանակ: 29-ի երեկոյան ժամերին հնարավոր է, 30-ին եւ մայիսի 1-ից 3-ը՝ առավելապես գիշերը եւ օրվա երկրորդ կեսին սպասվում է անձրեւ եւ ամպրոպ, ամպրոպի ժամանակ քամու ռիզմացում՝ 15-20 մ/վրկ:

Արտակարգ իրավիճակներ ԼՂՀ-ում

Ապրիլի 21-ից 28-ը

ՃՏՊ

Ապրիլի 25-ին ավտովթար է տեղի ունեցել Մարտունու շ. Կարմիր Շուկա-Յերիկեր ճանապարհահատվածում: Տուժածներին՝ վարորդ Վ. Գաբրիելյանին եւ ուղևոր Ջենմա Գաբրիելյանին թեթև մարմնական վնասվածքներով տեղափոխել են ք. Ստեփանակերտի Հանրապետական հիվանդանոց: Ըստ բժիշկների՝ տուժածների վիճակը բավարար է:

Հրդեհներ

Ապրիլի 21-ին հրդեհ է բռնկվել Ստեփանակերտի Կամո փողոցի տարածքում: Դեպքի վայր է մեկնել Ստեփանակերտի ՀՓՄ-ի հրշեջ-փրկարարական մասի 1 մարտական հաշվարկ: Հրդեհը մարվել է: Հրդեհի հետևանքով այրվել է չոր խոտ եւ 2 անվաղող:

Ապրիլի 23-ին հրդեհ է բռնկվել Մարտակերտի շրջանի Ազատա-

մարտիկների 154/ա փողոցում: Դեպքի վայր է մեկնել Մարտակերտի ՀՓՄ-ի հրշեջ-փրկարարական մասի 1 մարտական հաշվարկ: Հրդեհը մարվել է: Այրվել է շենքի 2-րդ հարկի հատակը:

Ապրիլի 27-ին հրդեհ է բռնկվել Հաղորդի գորամասի տարածքում: Հրդեհը մարվել է: Հրդեհի հետևանքով այրվել է գորամասի մոտ գտնվող խանութը:

Ջենք-գինամթերք

Ապրիլի 23-ին ահազանգ է ստացվել, որ Ասկերանի շ. Նորագյուղի մոտ գտնվող Սուլեյմանյան տարածքում հայտնաբերվել է գնդիկավոր ռումբ: Չինամթերքը վնասագերծվել է ՓԾ սակրավորների կողմից:

ԼՂՀ փրկարար ծառայության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին



ՌՈՍԳՈՍԱՏՐԱՆ ԱՐՄԵՆԻԱ

«Էլիտ Գրուպ». կյանքի նոր որակ



Սեյսմակայուն էլիտար շինարարության
առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Հակասեյսմիկ համակարգերի միջազգային ասոցիացիայի անդամ «Էլիտ Գրուպ» ընկերությունը տարածաշրջանի առաջատարն է սեյսմակայուն շինարարության ոլորտում:

Առաջին անգամ Հայաստանում «Էլիտ Գրուպ» շենքերում սկսեցին կիրառել ռետինամետաղյա շերտավոր բարձիկներ, որոնցով երկնաքերներ են կառուցում ճապոնիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում եւ այլուր:

«Էլիտ Գրուպ» միակ ընկերությունն է Հայաստանում, որն արժանացել է միջազգային հեղինակավոր վկայականների՝ կառավարման, աշխատանքի պաշտպանության եւ անվտանգության ոլորտներում:

«Էլիտ Գրուպ» բնակելի, առևտրային, առողջարանային ու հյուրանոցային համալիրներ, ամբողջական թաղամասեր, տարածաշրջանային ծրագրեր, տեղական ու միջազգային հեղինակավոր ու հուսալի գործընկերներ:

Ճիշտ կառավարումը գիտություն է, իսկ «Էլիտ Գրուպ» կառավարվում է գիտնականների կողմից:

Երեւան, Պուշկինի 21, ☎ 56-69-22, 56-69-33:

վերլուծություն

Աղետալի անվտանգություն

1986 թ. ապրիլի 26-ին տեղի ունեցավ Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի սարսափելի աղետը: Այս վթարն անվանում են 20-րդ դարի ամենախոշոր էկոլոգիական աղետը: Ցավոք, դեռ մի քանի սերունդ զգալու է դրա հետևանքները: Սակայն այսօր դժվար է պատկերացնել, թե ինչ կլինեի, եթե այն ժամանակ, 1986-ին, չիրականացվեին իրենց ծավալով ու բարդությամբ աննախադեպ աշխատանքներ՝ ուղղված վթարի հետևանքների արագ վերացմանը, եթե չլինեի ամբողջ ժողովրդի մասնակցությունը, իրենց կյանքն ու առողջությունը ռիսկի ենթարկած ինժեներատեխնիկական աշխատողների, գիտնականների, վթարը վերացնողների, զինվորների ու հրշեջների անձնագոհ աշխատանքը:

Չեռնոբիլյան աղետի հետևանքների վերաբերյալ բնարկումները մոր թափով վերսկսվեցին այս տարվա մարտի 11-ի ճապոնիայի երկրաշարժի հետևանքով «Ֆուկուշիմա -1» ատոմակայանում տեղի ունեցած վթարի պատճառով: Այդ կայաններն իրարից հազարավոր կիլոմետրերի հեռավորության վրա են գտնվում, տարբեր բնական ու սեյսմիկ գոտիներում են, տարբեր է նաեւ դրանց տեխնիկական հագեցվածությունը: ԽՍՀՄ-ում վթարի պատճառը մարդկային գործոնն էր, իսկ ճապոնիայում՝ բնական աղետը: Բայց երկու դեպքում էլ որոշ ընդհանրություններ կարելի է գտնել:

Օրինակ, երկու ռեակտորների ստեղծողներն ու շինությունների կառուցողներն էլ չէին կարողացել կանխատեսել բնական ու մարդածին բոլոր ռիսկերը: Ճապոնացիները հաշվի չէին առել որոշ սեյսմոլոգների զգուշացումները. «Ֆուկուշիմայի» տարածքում 9 մագնիստոդոլ երկրաշարժի ամհնարինության մասին տեսությունը, գուցե, այնքան էլ ճիշտ չէ: Իսկ Չեռնոբիլի նախագծողները պաշտպանության համակարգ չէին ստեղծել, որը կկանգնեցներ ռեակտորն անձնակազմի ռիսկային կամ անպատասխանատու գործողությունների դեպքում:

Եւս մեկ ընդհանրություն. Խորհրդային ղեկավարներն ու ճապոնացի էներգետիկները (առաջիններն ավելի երկար) փորձում էին հանգստացնել մարդկանց՝ նվազեցնելով աղետի մասշտաբները: Ապրիլի 26-ի երեկոյան Պոլիտբյուրոն հավատաց Առողջապա-

հության նախարարությանը, որը հայտարարել էր. «Հատուկ միջոցառումներ, այդ թվում եւ քաղաքից բնակչության տարհանում, չեն պահանջվում»:

Ոչ հեռու գտնվող գյուղերում ու բնակավայրերում ոչինչ չկասկածող բնակիչները հարսանիքներ էին կազմակերպում՝ ուրախանալով արեւոտ եղանակի համար: Ապրիլի 29-ի երեկոյան, երբ հազարավոր մարդկանց կյանքին եւ առողջությանը սպառնացող վտանգն ակնհայտ դարձավ, ժողովրդին հայտնեցին. «Աղտոտման մակարդակը գե-



րագանցում է ընդունված մորմերը, սակայն ոչ այնքան, որպեսզի բնակչության պաշտպանության համար հատուկ միջոցներ ձեռնարկվեն»: Կիեւցիները Կրեշչատիկում մաշինակայան շքերթ անցակցին, քաղաքում անցկացվեց Հեծանվասպորտի աշխարհի առաջնության մի փուլը:

Ճապոնացի էներգետիկներն էլ միանգամից չհայտնեցին «Ֆուկուշիմայի» վթարի հնարավոր հետևանքների մասին՝ սպասում էին վերեւներից ցուցումների:

Այդպիսի վարքը նման սարսափելի աղետների դեպքում կարելի է բացատրել նրանով, որ խաղաղ ատոմի համար պատասխանատու մարդիկ հավատացել են իրենց տեսությունների կատարելությանն ու դադարել են վախենալ սխալներից:

Երկու դեպքում էլ շարքային աշխատողներն ու միջին օդակի ղեկավարներն ավելի շատ վախենում էին ղեկավարության արժագանքի՝ արտակարգ իրավիճակի վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու դեպքում, քան վթարի՝ բնության ու բնակչության համար բացասական հետևանքներից:

Խորհրդային իշխանությունը պարբերաբար թաքցնում էր ճշմարտությունը բնապահ-

պանական աղետների մասին: Նիկիտա Խրուշչովը լռում էր 1954 թ. Տոգկու պոլիգոնում անցկացված ուսումնավարությունների մասին, որոնց ընթացքում միջուկային զենք էր կիրառվել, 1957 թվականին զինական պլուտոնիում արտադրող «Մայակ» քիմիական կորիմատում տեղի ունեցած վթարի մասին:

Ի վերջո, ինչպիսի՞ն էին Չեռնոբիլի առողջապահական, բնապահպանական եւ հումանիտար հետևանքները: Տեխնոգեն աղետի հետևանքների անմիջական վերացման ժամանակ զոհվել է 28 մարդ, եւս 18 լիկվիդատոր մահացել է ճառագայթումից մինչեւ 2004 թվականը: ՄԱԿ-ի փորձագետների հետազոտությունների տվյալների համաձայն, լիկվիդատորներից եւ Ուկրաինայի, Բելառուսի ու Ռուսաստանի ռադիացված տարածքների 5 միլիոն բնակիչներից զոհվել է 4000-5500 մարդ: Չեռնոբիլյան հաշմանդանների թիվը 40 000 է:

Տեղեկատվության պակասը ծնեց ռադիոֆիքիա եւ ամրապնդեց կանաչների դիրքերը, որոնք պահանջում էին փակել ատոմակայանները: Այդ շարժումը կրկին ակտիվացավ «Ֆուկուշիմայի» դեպքից հետո: Եվրոպական մի շարք պետություններ հայտարարեցին, որ վերանայելու են ատոմային էներգիայի զարգացման իրենց ծրագրերը: Չնայած այդ հայտարարություններին, բոլորն էլ խոստովանում են, որ էլեկտրաէներգիայի արտադրման ավելի եժան միջոցներ չեն ստեղծվել:

«Համալսյին կարծիք» ֆոնդի հարցումների համաձայն, հարցվողների 85 տոկոսը համոզված է, որ ԱՄԿ-ը սպառնալիք է մոտակայքում ապրող մարդկանց համար, իսկ 80 տոկոսը վախենում են Չեռնոբիլի կրկնությունից: Համաշխարհային միջուկային ասոցիացիայի տվյալների համաձայն, ածխային կայաններում արտադրվող մեկ գիգալատ հզորությունը 342 զոհ է խլում, գազի կայաններինը՝ 85, հիդրոկայաններինը՝ 885, մինչդեռ ատոմակայաններինը՝ 8:

Մեր իրավիճակը. ՀԱՒԿ-ի նոր էներգաբլոկի նախագիծը կփոփոխվի

Հայաստանի ԱԷԿ-ում չի կարող լինել այնպիսի վթար, ինչպիսին եղավ «Ֆուկուշիմայում», ապրիլի 20-ին կայացած

ասուլիսում ասաց Կառավարությանն առընթեր Միջուկային անվտանգության կոմիտեի նախագահ Աշոտ Մարտիրոսյանը: Նա բացատրեց, որ, ի տարբերություն մեկկոնտուրանի «Ֆուկուշիմա-1» ճապոնական ատոմակայանի, ՀԱԷԿ-ն ունի երկու կոնտուր, եւ եթե այստեղ լինի նույնատիպ վթար, արտանետումը կլինի շոգեբլոկից, որտեղ հավաքվում է ոչ ռադիոակտիվ ջուր:

Մարտիրոսյանը նշեց, որ «Ֆուկուշիմա-1»-ի վթարից հետո մշակվել է նախագիծ, որով ԵՄ երկրներին առաջարկվում է խոր վերլուծություն անցկացնել.

- Մենք եւս հակված ենք խոր վերլուծություն կատարել, - նշեց նա՝ հարավկովկասյան տարածաշրջանի համար առավել էական համարելով երկրաշարժն ու փոթորիկը: Բազմակողմանի վերլուծությունն արդեն սկսվել է եւ կտեւի երեք ամիս: Դրանից հետո միայն կներկայացվեն արդյունքները:

- Մեր ատոմակայանի անվտանգության չափանիշները լիովին համապատասխանում են ՄԱԳԱՏԵ-ի չափանիշներին, - ասաց Աշոտ Մարտիրոսյանը՝ նշելով, որ առայժմ հետաձգվում են մոր էներգաբլոկի կառուցման աշխատանքները, եւ հնարավոր է, որ «Ֆուկուշիմայի» վթարի ծավալները ճշտելուց հետո, գուցե, փոխվի Մեծամորի ատոմակայանի մոր էներգաբլոկի նախագիծը՝ բարձրացվի անվտանգության մակարդակը: - Մենք քննարկում ենք ամենաճանր վթարը, եւ առավելագույն վնասը սանիտարապաշտպանիչ գոտուց դուրս ռադիոակտիվ տարրերի առկայությունը կհասցնեն: Ամեն տարի անձնակազմն անցնում է հատուկ վերապարտաստում Սլովակիայում՝ այնպիսի սարքավորման վրա, որպիսին կիրառվում է մեր ատոմակայանում:

Մարտիրոսյանը հերքեց չորսնամովող այն լուրերը, թե ատոմակայանում պայթյուն է եղել կամ հարեւան երկրներից մեկի պահանջով այն կարող է դադարեցնել իր աշխատանքը:

- Ոչ մի երկիր իրավասու չէ պահանջելու ուրիշ երկրից՝ դադարեցնել ատոմակայանի շահագործումը, - նշեց նա, - եթե հնարավոր լինեի արգելել, ԵՄ երկրները ճնշում գործադրելու միջոցով կհասնեին դրան դեռ տասնյակ տարիներ առաջ:

Չեռնոբիլի աղետից 25 տարի անց

<<< 1 Մինչեւ Չեռնոբիլի աղետը աշխարհի այլ երկրներում 150 վթար է եղել: Այնտեղ էլ կային ճառագայթված մարդիկ, ռադիացիա, բայց նման ծավալի տեխնածին աղետ ու հետևանքներ երբեք չէին եղել: Չեռնոբիլի ատոմակայանի վթարի հետևանքով առաջացած ռադիոակտիվ ամալը 3 անգամ պատվեց երկրի շուրջը, ռադիոակտիվ տեղումներ եղան ԱՄՆ-ում, Հիմաստանում, Ճապոնիայում, Սկանդինավյան երկրներում:

Սովետական Միությունում ատոմակայանների 10 վթար էր եղել, որոնց մասին ոչ ոք չէր խոսում ու չգիտեին: Դրա համար էլ ատոմակայանի աշխատողները ռեակտորին վերաբերվում էին այսպես՝ սա սովետական է, ինչ ուզում ես արա, բան չի լինի:

Աղետի պատճառը ատոմակայանի շահագործման շատ կոպիտ խախտումն էր: Մեղավորը աշխատողներն էին, որ թույլ էին տվել սխալներ, որոնք բերել էին ջերմային պայթյունի: Այնտեղ հենց ջերմային պայթյուն էր, այլ ոչ թե միջուկային: Շահագործման կանոնների խախտման հետևանքով ռեակտորի ջուրը, որը 230 աստիճանից ավելի տաք չափի լինի, հասել էր 500-600 աստիճանի, առաջացած գազերի պատճառով պայթյուն էր եղել, ռեակտորը 4 ժամից ավելի չէր հովաքել,

դրանից էլ տեղի էր ունեցել մեկ այլ՝ ջերմային պայթյուն, որից ռեակտորի անվտանգության համակարգը խափանվել էր: Այնտեղ 180 տոննա վառելիք կար: Ուրանը հենց այնպես դուրս էր թափվում ու լույս տալիս: Ինքս եմ տեսել: Պրիպյատում մարդիկ դուրս էին գալիս պատշգամբ, նայում էին ու ասում. «Ինչ գեղեցիկ է, ասես իյուսիսային փայլատակում լինի»: Թե դրանից հետո այդ մարդկանց հետ ինչ է եղել, չեմ ուզում պատկերացնել:

Երբ ես Ռուսաստանում հաշմանդամության աստիճանը հաստատող հատուկ ստուգում անցա, հանձնաժողովը եզարակցրեց, որ իմ մի շարք հիվանդություններն առաջացել են Չեռնոբիլում ծառայողական պարտքը կատարելու հետևանքով: Ես երկրորդ կարգի հաշմանդամ եմ: Բոլոր մարդիկ էլ, ովքեր եղել են Չեռնոբիլում ու մասնակցել են լիկվիդացման եւ փրկարարական աշխատանքներին, առողջության հետ խնդիրներ ունեն:

Գեւորգ Վարդանյան, Հայաստանի «Չեռնոբիլ» ասոցիացիայի նախագահ

- Ես 19 տարեկան էի: Պարտադիր զինվորական ծառայություն էի անցնում Մերձբալթիկայում: Երբ մեզ տարան Չեռնոբիլ, ոչ մեկս գաղափար անգամ չունեինք, թե ինչ է տեղի ունեցել: Հիշում եմ, որ զարմացած շուրջս էի նայում, ասես Համաշխարհային

պատերազմի մասին ֆիլմերից կադրեր լինեին՝ փայտերով խաչված լուսամուտներ, դատարի տներ: Հարցնում էի՝ ինչ է եղել, ասում էին՝ կհասնենք տեղ, կիմանաք: Չեռնոբիլում մենք՝ զինծառայողներս, տարբեր աշխատանքներ էինք կատարում, հիմնականում վթարված էներգաբլոկի վրա շինարարություն էինք անում:

Ուղղակի նայելով՝ տպավորություն կարող էր ստեղծվել, որ ոչինչ էլ չի եղել: Միակ տեսանելի բանը քանդված էներգաբլոկն էր, ոչ հոտ էր զգացվում, ոչ էլ ինչ-որ բան էր լսվում: Միայն ցուցանակներն էին հուշում, որ այստեղ վտանգավոր է:

Ձոհերի մասին չէին խոսում այն տարիներին, բայց երբ զորամասում էի, ականատես էի լինում, կամ լսում էի դեպքերի մասին, երբ աշխատանքից, զորամասերից, քնած ժամանակ մարդկանց շտապ տեղափոխում էին հոսպիտալներ ու անմիջապես փորձում քուղարկել տեղի ունեցածը, որ ոչ ոք չիմանա այդ մասին: Եթե մի խմբի հետ դեպք էր լինում, ցրում էին անդամներին տարբեր խմբեր, որ այդ պատմությունը նրանք չվերապրեին ու չքննարկեին:

Այն ժամանակ մարդիկ բացարձակապես իրազեկված չէին, թե ինչ է պետք անել: Ծառերից խնձոր էին պրկում, ուտում, ինչը չէր կարելի: Ցուցանակով նշված վայրը մտնել չէր կարելի, բայց մտնում էին, չէին գիտակցում, ասում էին՝ հոտ չկա, տեսանելի չէ, ու-

րեմն ոչ մի վտանգ էլ չկա: Իսկ հիմա մարդիկ ավելի իրազեկված են ու զգույշ, նույնիսկ ճառագայթային բժշկության կենտրոններում, երբ տեսնում են այդ զգուշացնող նշանները, վախից մոտ չեն գնում:

Չեռնոբիլի աղետից հետո՝1990 թվականին, ստեղծվեց Հաստանի «Չեռնոբիլ» ասիոցիացիան՝ 1986-90 թթ. վթարավերականգնողական աշխատանքներին մասնակցած 3000 հոգու կողմից, որպեսզի կազմակերպությունը հետագայում կարողանա զբաղվել ճառագայթված մարդկանց սոցիալական ու առողջական խնդիրներով: Ամենաառաջնային խնդիրն այսօր այն է, որ ճառագայթահարված մարդկանցից ծնվել են բազմաթիվ երեխաներ, ովքեր մինչ օրս Հայաստանում ոչ մի բուժհետազոտում չեն անցել: Իսկ օրինակ Ռուսաստանում մեկը մյուսին լրացնող 4 օրենքներ կան, որոնցում ամրագրված է, որ ճառագայթահարված ծնողից ծնված երեխան տարին 2 անգամ պիտի անցնի պարտադիր բժշկական հետազոտություն: Ճապոնիայում հարցն ավելի խիստ է. ճառագայթահարված մարդու մինչեւ 4-րդ սերունդը բուժհետազոտում է անցնում: Այսօր մենք փորձում ենք լուծել հենց այս խնդիրը, որպեսզի Չեռնոբիլի աղետի հետևանքների վերացմանը մասնակցած մարդկանցից ծնված երեխաներն առողջ լինելու երաշխիք ունենան:

Անի Ստեփանյան



ԱՒ հանրագիտարան

Խոշորագույն ճառագայթային վթարներն ու աղետներն աշխարհում

Ամենաառաջին խոշորագույն ճառագայթային վթարներն աշխարհում տեղի են ունեցել առաջին ատոմային ռումբերի համար միջուկային նյութերի վերանշակման ընթացքում:

1944 թվականի սեպտեմբերի 1-ին ԱՄՆ-ում՝ Թեննեսի նահանգի Օք-Ռիջյան ազգային լաբորատորիայում, ուրանի հարստացման սարքի խողովակը մաքրելու փորձ կատարելիս տեղի է ունեցել ուրանի հեքսաֆտորիդի պայթյուն, ինչը հանգեցրել է վտանգավոր նյութի՝ հիդրոֆտորիդային թթվի առաջացման: Հինգ հոգի, որոնք այդ պահին գտնվում էին լաբորատորիայում, տուժեցին թթվային այրվածքներից եւ ճառագայթային ու թթվային գոլորշին շնչելուց: Նրանցից երկուսը զոհվեցին, մնացածները լուրջ վնասվածքներ ստացան:

ԽՍՀՄ-ում առաջին ճառագայթային վթարը տեղի ունեցավ 1948 թվականի հունիսի 19-ին, հենց հաջորդ օրը, երբ ատոմային ռեակտորը, որը գինական պլուտոնիում էր մշակելու (Չելյաբինսկի մարզի «Մայակ» կոմբինատի «Ա» օբյեկտ), սկսեց գործել նախագծային հզորությամբ: Մի քանի ուրանային բլոկների անբավարար սառեցման պատճառով տեղի ունեցավ դրանց եւ շրջակա գրաֆիտի տեղային միահալում, այսպես կոչված «կոզլոկ»: Շուրջ ինն օր ընթացողին մաքրում էին ձեռքի շաղափներով: Վթարի վերացման ընթացքում ճառագայթահարման ենթարկվեց տղամարդկանց ամբողջ անձնակազմը, ինչպես նաեւ շինարարական ջոկատների գինվորները, որոնք նույնպես ընդգրկված էին այդ աշխատանքներում:

1949 թվականի մարտի 3-ին Չելյաբինսկի մարզի «Մայակ» կոմբինատի ռադիոակտիվ թափոնները լցվեցին Տեչա գետը, ինչի պատճառով ճառագայթահարման ենթարկվեցին 124 հազար մարդ՝ 41 բնակավայրերում: Գառազայթման ամենամեծ չափաբաժին ստացավ 28 հազար մարդ, որոնք բնակվում էին գետին մոտ գտնվող բնակավայրերում:

1952 թվականի դեկտեմբերի 12-ին Կանադայում տեղի ունեցավ ատոմային էլեկտրակայանի՝ աշխարհում առաջին լուրջ վթարը: Օնտարիո նահանգի Չուլ-Ռիվերի ԱԷԿ-ի անձնակազմի տեխնիկական սխալը հանգեցրեց գերտաքացման ու ռեակտորի ակտիվ գոտու հալման: Ռադիոակտիվ նյութերը տոննաներով արտանետվեցին արտաքին միջավայր:

1955 թվականի նոյեմբերի 29-ին «մարդկային գործոնը» վթարի հանգեցրեց փորձարարական ռեակտորը ԱՄՆ Այդահո նահանգում: Պլուտոնիումի հետ կատարվող փորձի ընթացքում, օպերատորի սխալ գործողությունների հետեւանքով ռեակտորն ինքնափուլեցվեց, այրվեց նրա ակտիվ գոտու 40 տոկոսը:


1957 թվականի սեպտեմբերի 29-ին տեղի ունեցավ մի վթար, որն ստացավ «Կըշտըմյան» անունը: Պայթեց Չելյաբինսկի մարզի «Մայակ» կոմբինատի ռադիոակտիվ նյութերի պահեստը: Մասնագետները պայթյունի հզորությունը 70-100 տոննա գնահատեցին՝ ըստ տրոտիլային համարժեքի: Պայթյունից առաջացած ռադիոակտիվ ամպն անցավ Չելյաբինսկի, Սվերդլովսկի եւ Տյումենի մարզերի վրայով՝ առաջացնելով այսպես կոչված Արեւելա-Ուրալյան ռադիոակտիվ հետքը՝ ավելի քան 20 հազար քմ տարածքով:

Մասնագետների գնահատականներով, պայթյունից հետո առաջին ժամերին, մինչեւ տարահանումը, ավելի քան 5 հազար մարդ ենթարկվեց մինչեւ 100 ռենտգեն ճառագայթահարման: 1957-ից 1959 թվականների շրջանում վթարի վերացման աշխատանքներին մասնակցել է 25-30 հազար զինծառայող: Սովետական տարիներին աղետը գաղտնիացվել էր:

1957 թվականի հոկտեմբերի 10-ին Մեծ Բրիտանիայում՝ Վինդսթեյլում տեղի ունեցավ խոշոր վթար՝ գինական պլուտոնիումի մշակման երկու ռեակտորներից մեկում: Շահագործման ընթացքում թույլ

թարկվել մի մեծ տարածք՝ 1 800 քմ, որտեղ ապրում էր շուրջ 40 հազար մարդ:

1969 թվականին տեղի ունեցավ Լյուցեմսի (Շվեյցարիա) ստորգետնյա ատոմակայանի վթարը: Ռադիոակտիվ արտանետումներով աղտոտված քարանձավը, որտեղ գտնվում էր ռեակտորը, ստիպված էին առմիշտ որմնաշարել-զնդանել: Նույն թվականին վթար տեղի ունեցավ Ֆրանսիայում՝ «Սուրբ Լավրենտիոս» ԱԷԿ-ում պայթեց գործարկված ռեակտորը 500 մԲ հզորությամբ: Պարզվեց, որ գիշերային հերթափոխի ժամանակ



Թրի Մայլ Այլնդ, ԱՄՆ, 1979

1975 թվականի մարտի 22-ի յոթամյա հրդեհը՝ ԱՄՆ Ալաբամայի նահանգի «Բրաունս Ֆերրի» ԱԷԿ-ում, 10 մլն դոլարի վնաս հասցրեց: Ամեն ինչ տեղի ունեցավ այն բանից հետո, երբ բանվորը, վառվող մոմը ձեռքին, մոտեցավ բետոնե պատից փչող օդի արտահոսքը դադարեցնելու: Միջանցիկ քամին հափշտակեց կրակն ու տարածեց մալուխային ընթացողով մեկ: ԱԷԿ-ը մեկ տարով շարքից դուրս եկավ:

Ամենալուրջ միջադեպն ԱՄՆ-ի ատոմային էներգետիկայում դարձավ Փենսիլվանիա նահանգի Թրիմայլ-Այլենդի ԱԷԿ-ի վթարը, որը տեղի ունեցավ 1979 թվականի մարտի 28-ին: Սարքավորումների աշխատանքի խափանումների եւ օպերատորների կոպիտ սխալների մի ամբողջ շարքի հետեւանքով ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկում հալվեց ռեակտորի ակտիվ գոտու 53 տոկոսը: Մթնոլորտ արտահոսքին թեմոն եւ յոդ իներտ ռադիոակտիվ գազերը: Բացի դրանից, Սուկուսհանա գետը լցվեց 185 խմ թույլ ռադիոակտիվ ջուր: Գառազայթման ված շրջանից տարիանվեց 200 հազար մարդ:

1986 թվականի ապրիլի 26-ի լույս գիշերը Չեռնոբիլի (Ուկրաինա) ԱԷԿ-ի չորրորդ բլոկում տեղի ունեցավ խոշորագույն միջուկային վթարն աշխարհում. մասնակիորեն ավերվեց ռեակտորի ակտիվ գոտին: Մասնագետների վկայությամբ վթարը տեղի ունեցավ հիմնական ատոմային ռեակտորի աշխատանքի ժամանակ լրացուցիչ էներգիա ստանալու փորձի հետեւանքով: Մթնոլորտ արտանետվեց 190 տոննա ռադիո-

ակտիվ նյութ: Ռադիոակտիվ վառելիքի 140 տոննայից 8-ը հայտնվեց օդում: Մյուս վտանգավոր նյութերը շարունակում էին լքել ռեակտորը հրդեհի պատճառով, որը գրեթե երկու շաբաթ տևեց: Մարդիկ Չեռնոբիլում ճառագայթման ենթարկվեցին 90 անգամ ավելի, քան Հիբոսիմայում պայթած ռումբի ժամանակ: Վթարի հետեւանքով տեղի ունեցավ ռադիոակտիվ վարակում 30 կիլոմետր շառավղով: Աղտոտվեց 160 հազար քմ տարածք: Տուժեցին Ուկրաինան, Բելառուսը եւ Ռուսաստանի արեւմուտքը: Գառազայթային ախտահարման ենթարկվեց 19 ռուսական շրջան՝ 60 հազար քմ տարածքով, որտեղ բնակվում էր 2,6 մլն մարդ:

1999 թվականի սեպտեմբերի 30-ին տեղի ունեցավ խոշորագույն վթարը Գալոնիայի ատոմային էներգետիկայի պատմության մեջ: ԱԷԿ-ի համար վառելիք արտադրող գործարանում (Իբարանի պրեֆեկտուրա, Տոկայմուրա ավան), անձնակազմի սխալի հետեւանքով անկառավարելի շղթայական ռեակցիա սկսվեց, որը շարունակվեց 17 ժամ: Գառազայթահարվեց 439 մարդ, նրանցից 119-ը՝ մի չափաբաժնով, որը գերազանցում էր տարեկան թույլատրելի մակարդակը: Երեք բանվորի ստացած ճառագայթումը կրիտիկական էր: Նրանցից երկուսը մահացան:

2004 թվականի օգոստոսի 9-ին «Միհամա» ԱԷԿ-ում, որը տեղակայված է Հոնսյու կղզում՝ Տոկիոյից 320 կմ հեռու՝ արեւմուտքում, տեղի ունեցավ վթար՝ 3-րդ ռեակտորի տուրբինում 200 աստիճան ջերմությամբ գոլորշու հզոր արտանետում տեղի ունեցավ: ԱԷԿ-ի մոտակայքում գտնվող աշխատողները լուրջ այրվածքներ ստացան: Վթարի պահին չհնությունում, որտեղ տեղակայված է 3-րդ ռեակտորը, շուրջ 200 մարդ կար: Վթարի հետեւանքով ռադիոակտիվ նյութերի արտահոսք չի հայտնաբերվել: Չորս մարդ զոհվեց, 18-ը լուրջ վնասվածքներ ստացավ: Վթարն ամենալուրջն էր Գալոնիայում՝ ԱԷԿ-ներում զոհվածների թվով:

2011 թվականի մարտի 11-ին Գալոնիայում տեղի ունեցավ ամենահզոր երկաշարժը երկրի պատմության ամբողջ ընթացքում: Դրա հետեւանքով Օնագավայի ԱԷԿ-ում ավերվեց տուրբինը, հրդեհ առաջացավ, որը հաջողվեց հանգցնել: «Ֆուկուշիմա-1» ԱԷԿ-ում չափազանց լուրջ իրադրություն առաջացավ, սառեցման համակարգն անջատելու հետեւանքով 1-ին բլոկի ռեակտորում միջուկային վառելիքը հալվեց, մկատվեց ճառագայթման արտահոսք, ԱԷԿ-ի շուրջը՝ 10 կիլոմետրանոց գոտում տարիանում կազմավերվեց: Հաջորդ օրը՝ մարտի 12-ին, ՋԼՄ-ները հայտարարեցին ԱԷԿ-ում տեղի ունեցած պայթյունի մասին, NHK հեռուստաընկերությունը ցուցադրեց մի լուսանկար, որում երեւում է բլոկի քանդված պատը:



տրված սխալի հետեւանքով ռեակտորում վառելիքի ջերմաստիճանը կտրուկ բարձրացավ, եւ ակտիվ գոտում հրդեհ ծագեց, որը 4 օր տևեց: 150 տեխնոլոգիական ուղիներ վնասվեցին, ինչն իր հերթին հանգեցրեց ռադիոակտիվ նյութերի արտանետման: Ընդհանուր առմամբ այրվեց մոտ 11 տոննա ուրան: Ռադիոակտիվ տեղումներն աղտոտեցին Անգլիայի ու Իռլանդիայի շրջանների զգալի հատվածներ. ռադիոակտիվ ամպը հասավ Բելգիային, Դանիային, Գերմանիային, Նորվեգիային:

1967 թվականի ապրիլին հերթական վթարը տեղի ունեցավ «Մայակում»: Կարաչայ լիժը, որը «Մայակն» օգտագործում էր հեղուկ ռադիոակտիվ թափոնների համար, ուժեղ ծանծաղեց. դրա հետ մեկտեղ մերձափնյա գոտու 2-3 հա տարածքը եւ նույն չափով էլ լճի հատակը լրիվ լերկացան՝ իսպառ զրկվելով բուսականությունից: Ռադիոակտիվ աղտոտման էր են-

անուշադիր օպերատորը վառելիքային ընթացողու սխալ բեռնավորում էր կատարել: Դրա հետեւանքով տարրերի մի մասը գերտաքացել ու հալչել էր, դուրս էր հոսել 50 կգ հեղուկ միջուկային վառելիք:

1970 թվականի հունվարի 18-ին ճառագայթային աղետ տեղի ունեցավ Նիժնի Նովոգորոդի «Կարմիր Սոլովոկ» գործարանում: Կ-320 ատոմային սուզանավի շինարարության ժամանակ անթույլատրելիորեն գործարկված ռեակտորը մոտ 15 վայրկյան աշխատեց իր հնարավորությունները գերազանցող հզորությամբ: Դրա հետ մեկտեղ ռադիոակտիվությամբ վարակվեց այն արտադրամասը, որտեղ կառուցվում էր նավը:

Արտադրամասում էր գտնվում 1000 բանվոր: Արտադրամասի փակ լինելու շնորհիվ հաջողվեց փրկվել տեղաճեղ վարակումից: Այդ օրը շատերը գնացին տուն առանց անհրաժեշտ հակաակտիվացնող մշակման ու



մասնագետի անկյուն

Մայիս ամսվա կլիմայական բնութագիրը եւ ամսական կանխատեսումը

Մայիսին բնորոշ է մթնոլորտային պրոցեսների զգալի ակտիվացումը եւ օդային զանգվածների հաճախակի փոխափոխումը: Տաք եւ ցուրտ օդային զանգվածների հերթափոխը, ինչպես նաեւ երկրի մակերեսային անհավասարաչափ տաքացումը, բարձր լեռնային շրջաններում ձյան հալոցքը բերում են հզոր կոնվեկտիվ հոսանքների առաջացման՝ հաճախ են դիտվում հորդառատ տեղումներ, որոնք ուղեկցվում են ամպրոպներով:

Միջին ամսական ջերմաստիճանը հանրապետությունում կազմում է 9.6 °C: Միջին օրական ջերմաստիճանը համեմատաբար ցածր է առաջին տասնօրյակում՝ 8.2 °C, այնուհետեւ աստիճանաբար երրորդ տասնօրյակում բարձրանում է՝ հասնելով 10.9 °C: Միջին ամսական ջերմաստիճանն առավել բարձր է Արարատի եւ Արմավիրի մարզերում, Արագածոտնի նախալեռներում, Վայոց ձորում եւ Սյունիքի հովիտներում՝ +17... +18°C: Գեղարքունիքում, Արագածոտնի լեռնային շրջաններում եւ Շիրակում միջին ամսական ջերմաստիճանը +8... +10 °C է, բարձր լեռնային շրջաններում (3000 մետրից բարձր) այն դեռեւս բացասական է՝ -0.5 °C եւ կարող է դիտվել ձնախառն անձրեւ կամ ձյուն:

Արարատյան դաշտում եւ Սյունիքի հովիտներում արդեն մայիսի առաջին օրերին դիտվում է միջին ջերմաստիճանի կայուն անցումը՝ 15 աստիճանից բարձր, որը համարվում է ամռան սկիզբ: Լեռնային շրջաններում մայիսի կեսից դիտվում է միջին ջերմաստիճանի կայուն անցումը 10-ից բարձր:

Չնայած ջերմաստիճանային ֆոնն ամսվա ընթացքում բարձր է, լեռնային շրջաններում ամբողջ ամսվա ընթացքում պահպանվում է ցրտահարության վտանգը, ըստ որում ոչ հազվադեպ՝ զգալի ինտենսիվությամբ, ինչը կարող է կորստաբեր ազդեցություն ունենալ գյուղատնտեսական կուլտուրաների վրա:

Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը լեռնային շրջաններում կարող է նվազել մինչեւ -8... -10 °C: Արարատյան դաշտում, Տավուշի մարզում, Սյունիքի հովիտներում մինչեւ -10 °C, իսկ

առավելագույն ջերմաստիճանը կարող է հասնել +35... +38 °C (Արմավիր, Մեղրի):

Ջերմաստիճանի օրական տատանումները զգալի են՝ միջինը 8-10 °C, իսկ առանձին դեպքերում հասնում են 20-22 °C:

Արեւափայլի տեւողությունն ավելանում է 180-200 ժամով: Ամպամած օրերի թիվը գերակշռում է: Պարզ օրերի թիվը նվազագույնն է տարվա ընթացքում (1-4 օր):

Տարվա ընթացքում տեղումների առավելագույն քանակը դիտվում է մայիսին եւ միջինը կազմում է 92 մմ, տեղումներով օրերի թիվը՝ միջինը 17-20 օր: Ամենից շատ տեղումներ դիտվում են Լոռիում 120-130 մմ, ամենաքիչը՝ Արարատի, Արմավիրի մարզերում՝ 40-50 մմ: Առանձին տարիների օրական տեղումների քանակը



դրումների քանակը հասել է ամսական մոնոթոնի: Տեղումները մայիսին հաճախ հորդառատ բնույթ են կրում, որը բացատրվում է կոնվեկտիվ հոսանքներով: Հարաբերական խոնավությունը հանրապետությունում միջինը կազմում է 68%: Այն մայիսին մարտի եւ ապրիլի համեմատությամբ քիչ է ավելանում, իսկ առանձին շրջաններում լինում է ավելի ցածր: Արարատի եւ Արմավիրի մարզերում օդի հարաբերական խոնավությունը ամենացածրն է՝ 52-55%:

Մայիսին ամպրոպային գործունեությունն ակտիվանում է: Ամպրոպներով օրերի թիվը հանրապետությունում միջինը կազմում է 10-13 օր (առանձին տարիներին այն հասել է 20-22 օրվա): Մեծանում է կարկուտի հավանա-

կանությունը՝ միջինը ամիսը 1-3 օր, Տաշիրում՝ 8 օր: Մայիսին ավելի է մեծանում ջերմաստիճանային տարբերությունը հովտային եւ լեռնային շրջանների միջեւ, որով պայմանավորված մեծանում է լեռնահովտային շրջանառությունը: Լավ արտահայտված է քամու ուղղություն օրական ընթացքը՝ օրվա առաջին կեսին քամին փչում է հովիտներից դեպի լեռներ, իսկ երեկոյան՝ լեռներից հովիտներ: Հանրապետությունում քամու արագությունը որոշակիորեն մեծանում է, զգալիորեն փոքրանում է անդրդրների քանակը:

Արարատի եւ Արմավիրի մարզեր, Արագածոտնի նախալեռներ

Օդի ամսական միջին ջերմաստիճանն սպասվում է 18...19 °C,

ժեքից: Ամսվա առաջին տասնօրյակում հնարավոր է ջերմաստիճանի նվազում՝ գիշերը մինչեւ 0... -5 °C, առանձին օրեր ջերմաստիճանի բարձրացում՝ ցերեկը՝ մինչեւ 21... 24 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ -1... +2 °C, առավելագույնը՝ 19... 24 °C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է բազմամյա միջին քանակից ավել (մոռման 75-100 մմ):

Լոռու մարզ

Օդի ամսական միջին ջերմաստիճանն սպասվում է 12...14 °C, որը 1 °C բարձր է բազմամյա միջին արժեքից: Ամսվա առաջին տասնօրյակում հնարավոր է ջերմաստիճանի նվազում՝ գիշերը մինչեւ -1... +3 °C, առանձին օրեր ջերմաստիճանի բարձրացում՝ ցերեկը՝ մինչեւ 23... 25 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույն ջերմաստիճանը 0... -2 °C, առավելագույնը՝ 23... 26 °C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է բազմամյա միջին քանակից ավել (մոռման 95-130 մմ):

Տավուշի մարզ

Օդի ամսական միջին ջերմաստիճանն սպասվում է 13...16 °C, որը 1 °C բարձր է բազմամյա միջին արժեքից: Ամսվա առաջին տասնօրյակում հնարավոր է ջերմաստիճանի նվազում՝ գիշերը՝ մինչեւ +1... 6 °C, առանձին օրեր ջերմաստիճանի բարձրացում՝ ցերեկը՝ մինչեւ 26... 28 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույն ջերմաստիճանը 2... 5 °C, առավելագույնը՝ 25... 26 °C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է բազմամյա միջին քանակից ավել (մոռման 97-107 մմ):

Վայոց ձորի մարզ

Օդի ամսական միջին ջերմաստիճանն սպասվում է հովտային շրջաններում 18... 19 °C, լեռնային շրջաններում՝ 10... 12 °C, որը 1 °C բարձր է բազմամյա միջին արժեքից: Ամսվա առաջին տասնօրյակում հնարավոր է ջերմաստիճանի նվազում՝ գիշերը՝ հովտային շրջաններում մինչեւ 4... 8 °C, լեռնային շրջաններում 0... -4 °C, առանձին օրեր ջերմաստիճանի բարձ-

րացում՝ ցերեկը՝ հովտային շրջաններում 30... 32 °C, լեռնային շրջաններում՝ 20... 22 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ հովտային շրջաններում 3... 4 °C, լեռնային շրջաններում -1... -2 °C, առավելագույնը՝ հովտային շրջաններում 28... 30 °C, լեռնային շրջաններում՝ 18... 19 °C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է բազմամյա միջին քանակից ավել (մոռման հովտային շրջաններում՝ 45-60 մմ, լեռնային շրջաններում 95 մմ):

Սյունիքի մարզ

Օդի ամսական միջին ջերմաստիճանն սպասվում է հովտային շրջաններում 17... 20 °C, լեռնային շրջաններում՝ 11... 12 °C, որը 1 °C բարձր է բազմամյա միջին արժեքից: Ամսվա առաջին տասնօրյակում հնարավոր է ջերմաստիճանի նվազում՝ գիշերը՝ հովտային շրջաններում մինչեւ 4... 7 °C, լեռնային շրջաններում 0... -3 °C, առանձին օրեր ջերմաստիճանի բարձրացում՝ ցերեկը՝ հովտային շրջաններում 31... 35 °C, լեռնային շրջաններում՝ 21... 23 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ հովտային շրջաններում 4... 7 °C, լեռնային շրջաններում -1... +1 °C, առավելագույնը՝ հովտային շրջաններում 29... 33 °C, լեռնային շրջաններում՝ 24... 26 °C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է մոռմայից ավել (մոռման հովտային շրջաններում՝ 49-96 մմ, լեռնային շրջաններում 69-112 մմ):

Երեւան քաղաք

Օդի ամսական միջին ջերմաստիճանն սպասվում է 18... 19 °C, որը 1 °C բարձր է բազմամյա միջին արժեքից: Ամսվա առաջին տասնօրյակում հնարավոր է ջերմաստիճանի նվազում՝ գիշերը մինչեւ 3... 5 °C, առանձին օրեր ջերմաստիճանի բարձրացում՝ ցերեկը՝ մինչեւ 30... 32 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույն ջերմաստիճանը 4... 6 °C, առավելագույնը՝ 29... 30 °C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է բազմամյա միջին քանակից ավել (մոռման 45-60 մմ):

Լ. Վարդանյան
ԱԻՆ Հայպետհիդրոմետի տնօրեն

2011 թ.-ին սպասվող փոթորիկները

Արեւադարձային փոթորիկների սեզոնն Ատլանտյան օվկիանոսում 2011 թվականին բավական ակտիվ կլինի: Այսպիսի կանխատեսմամբ է հանդես եկել Կոլորադոյի համալսարանի օդերևութաբանների խմբի ղեկավար Ֆիլիպ Կլոտցբախը: Մասնագետի կարծիքով՝ այս տարի Ատլանտիկայում կարող է կազմավորվել 16 արեւադարձային ակտիվություն, որից 9-ը կվերածվի փոթորիկի: Բացի դրանից, Կլոտցբախի խոսքով, առնվազն 5-ը բավական հզոր կլինեն՝ երրորդից մինչեւ հինգերորդ աստիճանի վտանգավորությամբ:

Փոթորիկների անցյալ տարվա սեզոնը, որն Ատլանտիկայում սովորաբար ընգրկում է հունիսի 1-ից մինչեւ նոյեմբերի 30-ն ընկած ժամանակաշրջանը, ըստ մի քանի ցուցանիշների՝ շատ ակտիվ էր:

2010 թվականին այստեղ կազմավորվեց 19 ակտիվություն, որոնցից 12-ը վերածվեց փոթորիկի: Ընդ որում՝ դրանցից 5-ը երրորդ եւ ավելի կարգի վտանգավորության աստիճան ուներ: Սակայն ոչ մեկը չհասավ ԱՄՆ մերձափերին:

Այս տարի, ըստ Կոլորադոյի համալսարանի մասնագետների կանխատեսման, հավանականությունը, որ հզոր փոթորիկը «կշոշափի» ԱՄՆ տարածքը, 72 տոկոս է:

Մթնոլորտային երեւույթը դասակարգվում է իբրեւ ուժեղ ակտիվություն եւ հատուկ անուն է ստանում, եթե քամու արագությունն էպիկենտրոնում կազմում է 63 կմ/ժ: 118 եւ ավելի կմ/ժ արագությամբ դեպքում ակտիվությունը դառնում է փոթորիկ: Չեւավորված ավանդույթի համաձայն՝ Մայամիի (Ֆլորիդայի նահանգ) փոթորիկների հատագոտության ազգային կենտրոնում 21 անունից բաղկացած ցուցակ է նախապատրաստվում, որում այդ անունները դասավորված են ըստ լատինական այբուբենի: Մինչեւ 2014 թվականի փոթորիկների անուններն արդեն ցուցակագրված են:

Այդ մթնոլորտային երեւույթներին ԱՄՆ-ում հետետում են 1951

թվականից սկսած, եւ միայն մեկ անգամ՝ 1933-ին էր, որ դրանց թիվը կազմեց 21: Սովորաբար ավելի քիչ են լինում 18-19, նույն այդ ժամանակամիջոցում՝ հունիսի 1-ից մինչեւ նոյեմբերի 30-ը:

Սակայն 2005 թվականին Ատլանտիկայում կազմավորվեց 26 ուժեղ ակտիվություն, որոնցից 14-ը վերածվեց փոթորիկի, ինչը եւ դարձավ բացարձակ ռեկորդ, իսկ «ավելորդ» ակտիվությունները ստիպված էին անվանել հունական այբուբենի տառերով:

2011 թվականի փոթորիկների ցուցակն արդեն հայտնի է: Ահա դրանք. Առլին, Բրետ, Սինդի, Դոն, Էմիլի, Ֆրանկլին, Գերտ, Հարվի, Իռեն, Խոսե, Կատյա, Լի, Մարիա, Նեյթ, Օֆելյա, Ֆիլիպ, Բինա, Շոն, Թամմի, Վինս եւ Ուիլբեր:





հանրային առողջություն

«Լավ է մեկ անգամ տեսնել, քան հազար անգամ լսել»

Արհեստական լույսը, հեռուստացույցի եւ համակարգչի լուսավորվող էկրանները, էլեկտրոնային խաղերը բացասական ազդեցություն են ունենում աչքերի վրա, քանի որ լարում են տեսողական օրգանը:

Ինչպե՞ս պաշտպանել աչքերը. ներկայացնում ենք ֆրանսիացի պրոֆեսոր-ակնաբույժ Մարսել Մենյի խորհուրդները:

Երբեմն մեր ներքին էմոցիոնալ վիճակն արգելափակում է մեր տեսողական հնարավորությունները. մենք նայում ենք առանց տեսնելու՝ լցված մեր հույզերով ու երազանքներով:

Ակնաբույժներն ասում են, որ «սովորել լավ տեսնելը» լավ ապրել սովորելն է: Տեսողությունը հնարավոր է լավացնել զուտ հոգեբանական մեթոդներով: Օրինակ, ասել ինքդ քեզ. «Ես շատ լավ եմ տեսնում»:

Տեսողական յուրաքանչյուր ախտաբանության տակ մանկության տարիներին «ճնշված» զգացմունքներն են թաքնված: Հաճախ սա արմատացած զայրույթն է կարճատեսների եւ մեղքի զգացումը՝ հեռատեսների դեպքում:

Բավական է ազատվել մկանային լարվածությունից, որի պատճառը ճնշված զգացմունքներն են, որպեսզի տեսողությունը լավանա: Ինչպե՞ս ազատել աչքերը լրացուցիչ լարվածությունից: Դա թե՛ դժվար, բայց հնարավոր է:

- Հանգստացրեք հույզերը, - ասել է փիլիսոփա Ռոբերտ Բեր-

տոնը, - խաղաղ գիտակցությունը բուժում է ամեն բան:

Ամերիկացի հայտնի ակնաբույժ Բեյթսն ասել է, որ իր այցելուների մեծ մասի տեսողության վատացումն աչքերի անգիտակցական լարումից է: Նա խորհուրդ է տվել օրը մի քանի

քի եղջերաթաղանթի խոնավացմանը:

Երբ մենք անշարժ նայում ենք էկրանին, ապա թարթում ենք երեք անգամ ավելի քիչ, որի արդյունքում աչքը չորանում է, եւ առաջացնում սեղմման զգացում: Այդ ժամանակ



անգամ աչքերին հանգիստ տալ. ափերով ծածկել դրանք այնպես, որպեսզի ափի կենտրոնական մասը գտնվի բիրի դիմաց:

Երբ մենք երկար ժամանակ հեռուստացույց ենք դիտում կամ աշխատում ենք համակարգչով, աչքերը հոգնում են՝ անդադար լույսի ճառագայթներին նայելուց: Սովորաբար, մենք աչքերը թուփում թարթում ենք քսան անգամ, արցունքազեղներն արձագանքում են աչ-

աչքին պետք է օգնել՝ արհեստական խոնավացում ստեղծելով:

Մարդիկ, ովքեր տառապում են «աստիզմատիզմով», ավելի արագ են հոգնում համակարգչային աշխատանքից, հեռուստացույցից, քան սովորական կարճատեսները: Աչքերը կարող են արագ հոգնել նաեւ երկու աչքերի տեսողության տարբերությունից, երբ աչքի փոքրիկ մկանները հատուկ ջանքեր են գործադրում համատեղելի-

ության համար: Արդյունքում հնարավոր է, որ առաջանա գլխացավ:

3-4 ժամ համակարգչի դիմաց աշխատանքից հետո հարկավոր է հանգստացնել աչքերը: Համակարգչի սենյակը չպետք է չափազանց լուսավորված լինի կամ հակառակը: Լույսի աղբյուրը պետք է այնպես կարգավորել, որպեսզի էկրանի վրա ստվերներ չընկնեն:

Օգնեք ձեր աչքերին նաեւ ձեռքի տակ եղած միջոցներով.

Կտրեք հում կարտոֆիլի մեկ շերտ եւ դրեք փակ աչքին, թուլացեք, 5 րոպե անց վերցրեք այն:

Մի քանի անգամ սառը հոտոլ ջրով թրջեք աչքերը: Կոպեք սեղմեք ձեռքով, նստեք մի քանի րոպե, աշխատեք չնտածել ոչնչի մասին:

Խորհուրդ է տրվում հաճախ լվանալ աչքը թեյի թանձր հյութով: Աչքերը ոչ միայն կհանգստանան, այլեւ կփայլեն:

Վիտամինները լավացնում են աչքի տեսողությունը: Առաջին հերթին աչքերին անհրաժեշտ է վիտամին A: Եթե առավոտյան աչքի կոպերն ուռչում են, դա վիտամին A-ի պակասի արդյունք է: Այն պարունակում են կաթնային սննդամթերքները, ձուն, յուղոտ ձուկը եւ այլն:

Եթե դուք ունեք աչքի չորություն եւ գրգռվածություն, նշանակում է, որ ձեր օրգանիզմում պակասում է վիտամին B-ն, որն առկա է սնկերի, բանանի, գազարի մեջ:

Վիտամին C-ի՝ ցիտրուսների, սեւ հաղարջի, կարտոֆիլի, մաղադանոսի շնորհիվ պահպանվում է աչքի մկանների

Արդյունավետ է կատարել հետեւյալ վարժությունները:

1. 30 վարկյան արագ թարթեք, ուղիղ նայելով դիմացը. կրկնել 3 անգամ:
2. Փակեք եւ պտտեցրեք աչքերն աչ եւ ձախ, վերեւ, ներքեւ. կրկնել 4 անգամ:
3. Փակեք աչքերը եւ վերեւ - ներքեւ նայեք. կրկնել 8 անգամ:
4. Մի քանի րոպե ուժեղ սեղմեք աչքերը՝ կտրուկ լայն բացեք. կրկնել 5 անգամ:

շարժունակությունը, կանգնեցվում է ծերացման գործընթացը:

Բազմաթիվ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ «կատարակտը» եւ աչքի մկանների ծերունական դեգրադացիան զգալիորեն կարող են կրճատվել, եթե բավարար քանակով օգտագործվեն հակաօքսիդանտներ՝ վիտամիններ C, E, հացահատիկներ, արեւածաղկի սերմեր, ծովային մթերքներ եւ այլն:

Իհարկե, աչքի տեսողության լավացման համար միայն վիտամինները բավարար չեն: Բացի սննդի կարգավորումից, պետք է մի շարք այլ պայմաններ եւս ապահովել. թողնել ծխելը, արեւի ճառագայթներին ուղիղ չնայել, բավարար չափով քնել: Խնայեք ձեր աչքերը:

Ինչպես ժողովրդական խոսքն է ասում. «Լավ է մեկ անգամ տեսնել, քան հազար անգամ լսել»:

Մեքսիկական ծոց. 1 փարի անց

Մեկ տարի առաջ՝ ապրիլի 21-ին Մեքսիկական ծոցում «Deepwater Horizon» աշտարակում պայթյուն որոտաց, որի հետեւանքով զոհվեց 11 բանվոր, աշտարակը շրջվեց, իսկ օվկիանոս լցվեց մի քանի տոննա չմաքրված նավթ: Ասում են, որ Մեքսիկական ծոց է լցվել մոտ 4,9 միլիոն բարել նավթ՝ աղտոտելով ափերը, ավերելով քաղաքների տնտեսություններն ու ոչնչացնելով շրջակա միջավայրը:

Աղետի հետազոտությունները մինչեւ հիմա շարունակվում են՝ քննարկելով մարդկանց ու կենդանիների առողջության վրա ունեցած երկարաժամկետ հետեւանքները: Գործի կապակցությամբ շարունակվում է դատաքննությունը. լսումները նշանակված են 2012 թվականի փետրվարին, իսկ գործի շրջանակներում տրվել է արդեն 300 հայց, որոնք կորոշեն «Բրիթիշ Պետրոլիումի» եւ այլ ընկերությունների ճակատագիրը:

